ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ----------

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում 02.08.2011թ. տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Դանիելյան ՀՀ ՏԿՆ աշխատակազմի ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման, բյուջեների կատարման, աշխատավարձների և սոցվճարների նախկին պարտքերի մարման ընթացքի մասին
   / զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. Հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին
   / զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

3. Համայնքների կողմից հողի հարկի, գույքահարկի և տեղական տուրքերի գծով դատարան ներկայացված հայցերի մասին
   /զեկ.՝ մարզպետի տեղակալ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ/:

4. Համայնքների բյուջեներին <Ֆինանսական համահարթեցման մասին> ՀՀ օրենքով նախատեսվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների 2012 թվականի նախնական գումարների և մշտական բնակչության թվաքանակի մասին
   / զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

5. Մարզին տրամադրված 320 տոննա Էլիտա և առաջին վերարտադրության գարնանացան գարու և եգիպտացորենի սերմացուների գումարների վերադարձման ընթացքի մասին
/զեկ.՝գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱՋԱՏՅԱՆ/:

6. <Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան> ծրագրով մարզում 3-րդ կարգի ոռոգման համակարգերի վերանորոգման ընթացքի և համաֆինանսավորման խնդիրների մասին
/զեկ.՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱՋԱՏՅԱՆ/:

7. Հեռագնա արոտավայրերի վարձակալության պայմանագրերի կնքման գործընթացի մասին
/զեկ.՝ հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆ/ :

8.Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ԱՌԱՋԱՐԿԵԼ՝

Համայնքապետերին՝

--- Հետևել սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներին,բարձրացնել ցուցանիշները:

---Մարդահամարի կազմակերպման և անցկացման նպատակով անճշտությունները շտկելու ուղղությամբ կատարել բնակչության ճշգրիտ հասցեավորման աշխատանքներ:

---Կատարել խմելաջրի վարակազերծման և քլորացման հետ կապված աշխատանքները և պարբերաբար վերահսկել նշված գործընթացը:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ